այնքան համակրութեամբ էր խօսում Ասլանը: Ես Ասլանի կամ Կարօյի բոլոր ընկերներին ճանաչում էի, բայց այդ երիտասարդին դեռ չէի տեսել: Ես ստիպուած եղայ հարցնել.

— Իսկ Ռափայէլը՞, ի՞նչ եղաւ Ռափայէլը, նա մնա՞ց Հնդկաստանում, թէ եկաւ Պարսկաստան:

— Եկաւ, — պատասխանեց Ասլանը:

— Ինչպէ՞ս է, որ ես չեմ տեսել նրան:

— Դու նրան տեսնել չէիր կարող. նա զոհ եղաւ մի անտեղի կասկածանքի...

— Սպանեցի՞ն նրան: Ո՞վ սպանեց:

— Այդ մի հարցրու, — ասաց Ասլանը տխուր ձայնով եւ երեսը շուռ տոեց:

«Նա զոհ եղաւ մի անտեղի կասկածանքի...»: Համարեա միեւնոյն խօսքերը, որ մի անգամ ասաց ինձ Մարօն, երբ արտասուքը աչքերում զգուշացնում էր ինձ՝ չբարկացնել Կարօյին, եւ օրինակ էր բերում, թէ ինչպէս նա մի «կասկածանքիէ համար սպանեց իր ամենալաւ ընկերներից մէկին, մի հնդկացի երիտասարդի: Այդ եւս պարզոեցաւ: Բայց ես դարձեալ հարցրի Ասլանից, թէ ի՞նչ կասկածանքի համար սպանոեցաւ նա:

— Ինչ որ հարկաւոր էր քեզ գիտենալ, ես բոլորը պատմեցի քեզ, Ֆարհատ, — ասաց նա ծանր կերպով, — պատմեցի, գլխաւորապէս այն նպատակով, որ դու հասկանաս, որ եթէ մեր բարեկամները իրանց գործունէութեան մէջ որեւէ սխալ են գործել, — այդ առաջ է եկել նրանց մէջ՝ եռանդի չափազանցութիւնից եւ գիտութեան պակասութիւնից: Թէ չէ, իբրեւ լաւ մարդիկ, նրանց նմանները խիստ սակաւ են գտնւում: Նրանց անձնանուիրութիւնը, բաղձանքները եւ բոլոր ձգտումները անկեղծ են եղել: Իսկ իրանց ձգտումներին հասնելու չափ՝ գիտութիւն չեն ունեցել: Լսի՛ր, Ֆարհատ, առանց հիմնաւոր գիտութեան մարդ չէ կարող օգուտ բերել ոչ իր ազգին, ոչ իր հայրենիքին եւ ոչ մարդկութեանը: Ես բերեցի քեզ այստեղ, որ այդ բոլորը պատմեմ քեզ, որովհետեւ մենք շուտով բաժանոելու ենք միմեանցից:

Դարձեալ իմ սիրտը խոցոեցաւ, դարձեալ իմ աչքերը լցոեցան արտասուքով: Ամէն անգամ, երբ լսում էի այդ խօսքը, թէ բաժանոելու ենք միմեանցից, կարծես բոլոր աշխարհը մթնում էր ինձ համար:

— Գիտութիւնը գլխաւոր ուժն է, Ֆարհատ, որ տնօրինում է մարդկային բարին, նրա երջանկութիւնը, նրա խաղաղութիւնը: Բայց դու ոչինչ գիտութիւն չունես, Ֆարհատ, քո մէջ պակաս է ամենահասարակ զարգացումն